

ԹԱՎՐԻԶԻ ԱՐԱՄԵԱՆ (ՆԵՐՍԻՍԵԱՆ) ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ**Դերենիկ ՄԵԼԻԿՅԱՆ**

Բանալի բառեր՝ Ատրպատականի հայոց առաջնորդ, վանքի վանահայրության, Արամեան (Ներսիսեան) ազգային դպրոց, դպրոցանվեր գործունեություն, գրադարան-ընթերցարան, ազատագրական պայքար, ազգային ոգի, հայեցի դաստիարակություն:

Ключевые слова: армянский предводитель Атропатены, патриархат монастыря, Армянская национальная школа Нерсисян, преподавательская деятельность, библиотека – читальный зал, освободительная борьба, национальный дух, армянское национальное воспитание.

Keywords: the Armenian leader of Atropatena, patriarchy of the monastery, Aramyan (Nersisyan) national school, educational activity, library – the reading room, liberation struggle, national spirit, the Armenian national education.

АРМЯНСКАЯ НАЦИОНАЛЬНАЯ ШКОЛА НЕРСИСЯН г.ТАВРИЗА**Д. МЕЛИКЯН**

«Арамьянская» школа изначально называлась «Нерсисян» (с 1851 по 1875 год). У истоков создания школы в 1851г. стоял Месроп Тагиядян, впоследствии его сменили епископ Саак Сатунян и Рубен Ханазат.

В школе-гимназии преподавались такие предметы, как армянский, русский, французский, персидский языки и другие предметы.

Арамьянская школа отличалась мощным национальным духом и патриотическим воспитанием, всегда оказываясь в пекле армянской освободительной борьбы. Школа действовала до 1936 года. За годы существования из ее стен вышли тысячи выпускников.

ARAMYAN (NERSISYAN) NATIONAL SCHOOL OF TABRIZ**D. MELIKYAN**

The Aramyan school called initially "Nersisyan" (from 1851 to 1875) was founded by Mesrop Tagiyadyan in 1851. Subsequently he was replaced by bishop Sahak Satounyan and Rouben Khanazat.

The Armenian, Russian, French, Persian languages and other subjects were taught at the school- gymnasium.

The Aramyan school was known of its strong national spirit and patriotic education, being always in the front line of the Armenian liberation struggle. The school worked till 1936, with thousands of peoples graduating from the school.

«Արամեան» դպրոցը ի սկզբանե կոչվել է «Ներսիսեան» (1851-ից մինչև 1875 թ.): 1851թ. դպրոցի գործունեության ակունքներում կանգնած է եղել Մեսրոպ Թադիսյանը, որին հաջորդել են հետագայում առաջնորդ Սահակ եպիսկոպոս Սաթունյանը, Ռուբեն Խանազատը:

Դպրոց-վարժարանում դասավանդում էին հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, պարսկերեն և այլ առարկաներ:

Դպրոցը գործել է մինչև 1936 թվականը՝ միշտ գտնվելով հայ ազատագրական պայքարի թոկոսների մեջ: Արամեան դպրոցում գործել է եղել ազգային ոգին և հայեցի դաստիարակությանը, տվել է հազարավոր ընթացավարտներ:

Ներսես Ե Աշտարակեցի Շահազիզեան կաթողիկոսը (Ներսես Շնորհալի, 1843-1857) 1851թ. Ատրպատականի հայոց առաջնորդ է նշանակում «գովուրեանց արժանի» ու «... բարեջան վիճակաւոր վանաց եւ վիճակի Սրբոյ նախկին Լուսաւորչի հայոց Սրբազան Առաքելոյն Թադէոսի ...»¹ Սահակ արք. Սաթունեանց Աշտարակեցուն: Վերջինս միաժամանակ վարում էր նաեւ Թադէոս առաքելի վանքի վանահայրութիւնը: Նոր առաջնորդի գործունեութեան շրջանը կարճ է տեւում՝ 1851-1857թթ.², սակայն նա բաւական օգտակար գործունեութիւն է ծաւալել, մասնաւորապէս Հայոց առաջնորդարանին կից կառուցում է

¹«Դիւան Ատրպատականի Հայոց Պատմութեան», հ. ք, էջ 79

²ՀԱԴ, ֆ. 319 ց.1 , գ. 108, թ. 58

«Արամեան» տղայոց (արական) դպրոցի նոր շէնքը:¹ Այդ իսկ պատճառով Արամեան դպրոցը ի սկզբանե կոչվել է «Ներսիսեան»² (1851–ից մինչև 1875):

1851թ.-ին կառուցված «Ներսիսեան» դպրոցի գործունեության ակունքներում է կանգնած եղել Մեսրոպ Թադիադեանը, դեռևս 1835-56 թականներին, երբ նույն դպրոցը անուանակոչվում էր «Բերդաթաղի դպրատուն-վարժատուն»: Ատրպատականի թեմի առաջնորդ Նիկողոս Կարբեցի եպիսկոպոսի օրոք (1833թ.) եւս դպրատունը շարունակում էր իր ուսումնական գործը գրեթե նախկինի պէս, որով, ըստ բանասէր Հայկ Աճեմեանի՝ «Ս. Աստուածածին եկեղեցւոյ շատ քիչ ուսումնական քահանաներէն եւ կամ ոմն դպիր ու տիրացու՝ այդ մենաւոր ու տիրատեսիլ սենեակին մէջ գրել-կարդալ կըսովրեցնէին հայ պատանիներուն: Ասոնք գրաճանաչ դառնալէ ետոյ կըսկսէին կարդալ եւ կամ բերանացի սովորիլ եկեղեցական աղօթքներ, շարականներ, սաղմոսներ, մինչեւ անգամ Գր. Նարեկացիի խորթին գրաբարով աղօթքներն ու փառաբանութիւնները: Դասատունէթէ գիտէր քերականութիւն կամ ճարտասանութիւն, բաժին կը հանէր նաեւ իւր աշակերտներուն: Կաւանդի, որ քահանաներէն մէկը, որ քերականութիւն կուտար պատանիներուն, չէր հանդուրժէր, որ ասոնք շատ ըմբռնէին եւ կամ հասկանային իր ըսածները, վախնալով, որ կրնան զինք գերազանցել: Այդ քահանան այնքան ծեծու պատիժ կուտար ընդունակ աշակերտներուն, որ ասոնք ստիպւած կըլլային ուսումէն փախչիլ եւ արհեստի երթալ...»:³

Ահաւասիկ, Նիկողոս եպսկ.-ի ժամանակ էր, որ 1836 թականի ամռանը Հնդկաստանից Թաւրիզ եկաւ Մեսրոպ Թադիադեանը, որ Նոր Զուղայում եւ Կալկաթայում իբրեւ դաստիարակ, ազգային գործիչ եւ քաջ ուսումնագէտ՝ մեծ համբաւ ունէր եւ որ տիրապետում էր հայերէն, պարսկերէն եւ անգլերէն լեզուներին: Թաւրիզի հայերը տեսնելով Թադիադեանի հմտութիւնը եւ դաստիարակի կարողութիւնը, խնդրեցին, որ իրենց վարժարանի հայկաբանութեան դասերն ստանձնի տարեկան 60 թուման ռոճիկով..., ու այդպէս՝ մեկուկէս տարի, մինչև 1837-ի վերջերը: Մեսրոպ վարժապետը պաշտօնավարութեան ընթացքում շատ խոր եւ անմոռաց յիշատակներ թողեց Թաւրիզի հայութեան մօտ:

Արամեան դպրոցի բացումը առաջնորդ Սաթունեանի գլխաւորութեամբ կատարել է՝ 1852թ. սեպտեմբերին 60 աշակերտներով: Այդ թիւը յաջորդ տարին հասնում է 100-ի: «Իրական փաստն այն է, - գրում է Հայկ Աճեմեանը, - որ 1851 թականի յունիս 30-ին կատարւեցաւ Թաւրիզի Հայոց դպրոցական անդրանիկ շէնքի պաշտօնական հիմնարկութեան մեծաշուք հանդէսը»:⁴

Դպրոցը սկզբնական տարիներում (Սաթունեանի օրոք) տնտեսական ծանր վիճակ ունէր, որը սակայն հետագային բարւոքում է Գեորգ արք. Վեհապետեանի ջանքերով: Նա 1865-ին 250 թումանի տարեկան նպաստ է ապահովում դպրոցին Նասրէդդին Շահից: 1872-ից թեմական մուտքերից բաժին է հանում դպրոցին, իսկ 1873-ին յաջողում է տարեկան որոշ նպաստ ստանալ նաեւ ռուս կառավարութիւնից, որը վճարել է մինչև Ա. Աշխարհամարտ:

1874-75 ուս. տարում դպրոցի տեսուչ է հրաւիրւում Նոր Զուղայեցի, նշանաւոր լեզուբան եւ Ֆերդովսիի «Շահնամէ»-ի թարգմանիչ Սամուէլ Գիւլգադեանը: Այդ թւից դպրոցը կոչւում է Արամեան:⁵

¹ Ֆրանգեան Ե., «Ատրպատական», Թիֆլիս, 1905թ., էջ 35:

² Թաւրիզի Հայոց ազգային վարժարանի հիմնադրութեան պաշտօնական հանդէսից յետոյ Առաջնորդ Սահակ եպիս. յատուկ մի գրութեամբ՝ «Յորդորակ ծանուցական»-ով յայտնում է, որ « դպրոցը յանուն Ներսէսի Շնորհալոյ պիտի կոչուի «ՆԵՐՍԻՍԵԱՆ ՎԱՐՎԱՐՄԱՆ»: (Տե՛ս. Հայկ Աճեմեանի «Պատմութիւն Արամեան Ազգային դպրոցի», էջ 29):

³ Աճեմեան Հայկ, «Պատմութիւն Արամեան ազգային դպրոցի», Թաւրիզ, 1936թ., էջ 9:

⁴ Նոյն տեղում, էջ 26:

⁵ Տե՛ս՝ «Բաֆֆի տարեգիրք», Ա. տարի, 1969թ., էջ 361:

«Ներսիսեան-Արամեան» վարժարանում դասաւանդուել են հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն, պարսկերէն եւ այլ առարկաներ: Տարբեր տարիների դպրոցում դասաւանդուել են՝ Բաֆֆին¹, Հրաչեայ Աճառեանը, որը Շուշիի դպրոցի փակուելուց յետոյ Թաւրիզ էր փոխադրուել, հայագէտ-լեզուաբան Մուշեղ Մուշեղեանը եւ այլն:

Ուշագրաւ վկայութիւն ունի մեծ վիպասան Բաֆֆին Արամեան դպրոցի մասին.- «Սաթունեանը շինեց դպրոցը, առաջնորդարանը եւ այլ ազգօգուտ հիմնարկութիւններ,- բոլորը իւր փողով, այսինքն այն փողով որ նա ստանում էր վիճակից որպէս «հոգեւոր պտուղ»: Բայց նա ժողովրդից ստացածը կրկին ժողովրդին յետ վերադարձրեց, իւրեան չը սեպհականացրեց: Սաթունեանն ինքը ժողովրդական մարդ էր. նա ոչինչ առիթ չունէր իւր դպրոցը կնքել «հոգեւոր» անունով: ... Այս դպրոցը բոլորովին ժողովրդական էր, բայց նորան *եկեղեցականացրին*, մեռցրին: ... Ժողովուրդն այս հասկացաւ, բայց հասկացաւ խիստ ուշ ...»:²

Բազմաթիւ աղբիւրների վկայութեամբ Սահակ եպիս. Սաթունեանը իր վեց տարիների (1851 ապրիլ-1857 մարտ) ժողովրդանւէր եւ դպրոցանւէր գործունէութեամբ յաջողեց մեծ ժողովրդականութիւն վաստակել: Որպէս Թաւրիզի Հայոց Ներսիսեան (հետագային Արամեան) դպրոցի հիմնադիր, բարերար եւ հովանաւոր Սաթունեանը իր անձնւէր գործունէութեամբ, իր անկաշառ եւ ազգասիրական աշխատանքներով յաւերժօրէն անմահացել է Ատրպատականի հայութեան եւ մասնաւորապէս Արամեան դպրոցի պատմութեան մէջ:³

Ահաւասիկ, «Արամեան» դպրոցի եւ Թաւրիզի հայոց կրթական պատմութեան ոսկեդարը 1870-1880թթ.-ը կարելի է համարել: Առաջնորդներից սկսած մինչեւ ուսուցիչներն ու հոգաբարձուները անմնացորդ եռանդով գործի էին լծուել եւ խոր գիտակցութեամբ ու նւիրածութեամբ ջանում էին բարձրացնել դպրոցի բարոյական ու կրթական մակարդակը:

Արամեան ազգային դպրոցը հետագայ տարիներին օժտուել է նաեւ հարուստ գրադարանով եւ թատերասրահով:

1867-73թթ. Առաջնորդական պաշտօն վարած մշակութասէր եւ կրթասէր Գրիգոր արք. Յովբեանի ջանքերով է հիմնադրուել Արամեան դպրոցի գրադարան-ընթերցարանը, որն սկզբնական շրջանում օժտուել է 93 ընտիր գրքերից եւ 25 բարձր մակարդակներում պատրաստուած հրովարտականքով: Հետագային նոյն գրադարանի տեսուչ Կ.Պոլսեցի Յ. Հաճեանի միջոցով գրադարանը հարստանում է մի քանի հարիւր կտոր զանազան գրքերով: Այս մասին Բաֆֆին գրում է.- « Շնորհակալութիւն Կ. Պոլսեցի ազգայիններին, որոնք ցոյց տուին խիստ ազնիւ համակրութիւն դէպի աղքատ Դաւրէժի ընթերցարանը, ուղարկելով նորան, որպէս

¹1969թ.-ի «Բաֆֆի տարեգիրք»-ում Նորայր Մամեանի «Կրթական կեանքը Թաւրիզում» պատմատեղեկագրական աշխատութեան էջ 360-ում, Թաւրիզում իգական դպրոց հիմնելու մասին կարդում ենք հետեւեալը.- «Այդ շրջանում (1874-1876), դպրոց էին յաճախում միայն տղաները: Իգական սեռի կրթութեան դէմ էին շատերը: Այս առթիւ 1877թ.-ին Բաֆֆին Թաւրիզից մի յօդած է ուղարկում Թիֆլիսի «Մշակ»-ին, ծանր օրէն քննադատելով նրանց, ինչպէս եւ որոշ հոգաբարձուների, որ դէմ էին աղջիկների ուսումնառութեան: Այդ թղթակցութիւնը մեծ փոթորիկ է առաջացնում Թաւրիզում, որի հետեւանքով՝ ուսումնական տարին չլրացած՝ Թաւրիզից հեռանում է Բաֆֆին: Պայքարը շարունակում է Մեսրոպի քին. Փափագեանը եւ յաջողում է 1879թ.-ի օգոստոսին Ղալայում հիմնել աղջիկների դպրոց («Աւարայրեան» ընկերութեան շէնքում), ինքը տեսուչ եւ իր Աշխէն աղջիկն էլ ուսուցչուհի դառնալով: Այս դպրոցի համար 1887-ին Թումանեանները կառուցեցին նոր դպրոցական շէնք՝ «Աննայեան» անամբ, որից յետոյ Ղալայի դպրոցները կոչւեցին «Արամեան-Աննայեան» ազգային դպրոցներ: Աւելի ուշ 1879թ.-ի հոկտեմբերին Ղալայի օրինակով Լիւաւա թաղում եւս բացում է աղջկանց դպրոց: Սա մեծապէս ընդարձակում է, երբ Թումանեանները այնտեղ 1895 թականին կառուցում են թաւրիզահայ կրթական կեանքի փառքը հանդիսացող «Թամարեան» փառահեղ շէնքը:

² Բաֆֆի, «Պարսկական պատկերներ», էջ 510:

³ Տե՛ս. «Պատմութիւն Արամեան Ազգային դպրոցի», էջ 53:

ընծայ 470 հատոր զանազան լեզուներով գրքեր: Իսկ մեր Ռուսաստանի հայերից չը գտնուեցաւ եւ ոչ մէկը, որ մի հատոր գիրք ուղարկած լինէր»:¹

Իսկ 1913թ.-ին, Ներսէս արք. Մելիք-Թանգեանի առաջնորդութեան օրօք, Թաւրիզում կառուցւած «Արամեան» նշանաւոր թատերասրահը ժամանակի չափանիշով կոթողական շէնք էր, որն ամբողջ երկու տասնամեակ լիովին ծառայել է իբրեւ թատրոն, միաժամանակ դառնալով եկամտաբեր աղբիւր՝ դպրոցի համար:

Գտնուելով հայ ազատագրական պայքարի թոհուրոհի մէջ, որտեղ որպէս այդ պայքարի «խարխախ» էր ծառայում հինաւորը եւ հայրենամերձ Ատրպատականը, հայ յեղափոխական ռաւիւրանների գաղափարներով է ներշնչել իրանահայ սերունդը եւս, երբ որպէս նոյն գաղափարի կրողներ Արամեանում են յայտնուել հայ ազգային կուսակցութիւնների ղեկավար դէմքերը:

Այսպէս ուրեմն 1890-91 թականին «Արամեան»-ում իբրեւ ուսուցիչ պաշտօնավարել է նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներից Ռոստոմը:

1903-ին Թաւրիզի Արամեան դպրոցի տեսչութիւնն է ստանձնում Հնչակեան կուսակցութեան հիմնադիրներից՝ Ռուբէն Խանազատը, իր կողքին որպէս ուսուցիչ ունենալով Ատրպետին, որոնք այդ ճամբով տարածողն են հանդիսացել Հնչակեան կուսակցութեան գաղափարախօսութեան:

Դպրոցը գործել է մինչեւ 1936թ.-ը, երբ կառավարութեան հրահանգով փակուել են միաժամանակ թաւրիզահայութեան միւս կրթօջախները:

Հետաքրքիր գուգադիպութեամբ, Փարիզում հրատարակող «ՎԷՄ» հանդէսի ԺԲ, սեպտեմբեր-դեկտեմբեր (1935թ.) համարի 111-րդ էջում «Արամեան դպրոցի հարիւրամեակը» խորագրի ներքոյ կարդում ենք հետեւեալը. «Այս տարի լրանում է Թաւրիզի «Արամեան» դպրոցի հարիւրամեակը: Այս դպրոցը իրանահայ մշակոյթի առաջին կոթողներից մէկն է, որ ահագին կրթական դեր է կատարել Ատրպատականի կեանքում: Այսօր այդ կարեւոր հիմնարկութիւնը գտնուում է նիւթական խիստ ծանր դրութեան մէջ: Թէ՛ հարիւրամեայ յոբելեանը տօնելու, եւ թէ՛ որոշ նիւթական միջոց ապահովելու նպատակով որոշուած է կատարել դպրոցի յոբելեանական տօնակատարութիւնը 1936թ. ապրիլ 19-ին...», որից յետոյ, սակայն, փակուում է դպրոցը...:

Արամեան դպրոցում զօրեղ է եղել ազգային ոգին եւ հայեցի դաստիարակութիւնը: Դպրոցը ղեկավարել է ժամանակի մանկավարժական հիմունքներով: Դպրոցում կազմուել է աշակերտական միութիւն, որն ունեցել է իր պատի, ինչպէս նաեւ ձեռագիր կամ խմորատիպ թերթը, որն էլ ունեցել է իր խմբագրական կազմը:

Թաւրիզի հայոց Ազգային Արամեան դպրոցը իր հարիւրամեայ (1835-1935) գոյութեան ընթացքում, մինչեւ 1936 թականի փակումը տւել է հազարաւոր ընթացաւարտներ: Շուրջ հինգ հազար հոգի այդ դէպքաւոր կադնիի հովանու տակ պատսպարուելով գրաճանաչ են դարձել եւ ուսում ու կրթութիւն են ստացել: Իբրեւ իմացական, հոգեկան եւ ազգային զգացումների անսպառ գանձարան, նրանց մէջ կաթեցրել են իրենց հոգու եւ մտքի լոյսն ու ճակատի ազնիւ քրտինքը վաստակաւոր դէմքեր՝ թեմակալ առաջնորդներ, հոգաբարձուներ, տեսուչներ եւ ուսուցիչ – ուսիներ, որպէսզի անշէջ ու յարատեւ պահի Սուրբ Մեսրոպեան տաճարի ջահը:

Տնկնություններ հեղինակի մասին.

Դերենիկ Մելիքեան-«ԱԼԻՔ» օրաթերթի գլխաւոր խմբագիր

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.դ., Գ.Տ. Հարությունյանը:

¹ Նոյն տեղում, էջ 70: